Ա. Ա. ՍԱՀԻՆՅԱՆ

ԶՈՎՈՒՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Ապարանի շրջանում ստեղծվում է արհեստական խոշոր լիճ, որի հետևանքով Զովունի գյուղի ճարտարապետական կառույցների տեղանքը մնում է լճի ջրերի տակ։

Զովունի գյուղը (պատմական Ծառայիշեն) հեռավոր անցյալում մտել է Արշակունիների արքունի կալվածք Այրարատի սիգ գավառի մեջ, որն ըստ Ապարանում դեռևս դարասկզբին հայտնաբերված հունարեն արձանագրության, Տրդատ II թագավորը III դարում նվիրել է արքունիքում պալատական ծառայության մեջ գտնվող Գնթունի իշխաններին[1]։

Գնթունի նախարարական տան մի ճյուղ, անտարակույս, հաստատված է եղել Զովունիում, որով և պետք է բացատրել տվյալ վայրում նյութական մշակույթի մի շարք հուշարձանների վրա նրանց անունների հիշատակությունը (գլխավոր եկեղեցու պատին՝ Գնթունյաց տեր Գրիգորի, նրանից ոչ շատ հեռու գտնվող ժայռակոփ գերեզմանի կափարիչի վրա՝ Դավիթ Գնթունու, նույն այդ շրջապատից վերջին պեղումների ժամանակ բացահայտված տապանաքարի վրա՝ մեկ այլ Գնթունու անունները)։

Բնական է, շինարարական աշխատանքները Զովունիում սկզբնավորվել են շատ խոր անցյալում։ Վաղ միջնադարում այստեղ արդեն գոյություն է ունեցել զարգացման բարձր աստիճանի վրա գտնվող ճարտարապետական կառուցվածքների խոշոր խումբ, որից պահպանվել են՝ գյուղի արևելյան ծայրամասի փոքր բարձունքի վրա գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող գմբեթակիր մեկ կիսավեր տաճար, նրանից արևելք հին գերեզմանատան մեջ միանավ կառուցվածքի ու նրան կից դամբարանային երկհարկանի շենքի մնացորդներ, իսկ գմբեթակիր տաճարից դեպի հարավ՝ երկայնական տիպի մեկ գողտրիկ մատուռ։

Մի շատ արժեքավոր հուշարձանի ավերակներ գտնվել են գմբեթակիր տաճարից դեպի արևելք, որի մասին Թ. Թորամանյանը հաղորդում է. «Այս եկեղեցու արևելյան կողմը քառորդ կիլոմետրի վրա կա ավելի մեծ մի եկեղեցու ավերակ, թեև հողին հավասարված, այնուամենայնիվ ձևը հայտնի է, որ եղեր է Թալինի մեծ կաթողիկեի նման խաչաձև հատակագծով, շուրջը թափված քանդակազարդ խոյակներ և ուրիշ բեկորներ զինքը կտանին մինչև V դար»[2]։ Ցավոք, այս հուշարձանը ներկայումս ամբողջապես ոչնչացված է։

Ճարտարապետական այս մեծարժեք խմբից պահպանված հուշարձաններն են, որ կարող են մնալ նորաստեղծ լճի ջրերի տակ. և ահա դրանք Հայկական

---

1 К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении, Москва-Ленинград, 1953, էջ 282.

2 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1948, հատոր, Բ, էջ 128։



Նկ. 1. Զովունիի Պողոս-Պետրոս տաճարի տեսքը հարավ-արևելքից։

ՍՍՀ Մինիստրների սովետի շինարարության պետական կոմիտեն ճիշտ և ճիշտ նույն վիճակով տեղափոխում է նոր վայր[3]։

Հուշարձանները տեղափոխվում են գյուղից դեպի արևելք գտնվող ոչ մեծ բարձունքի վրա. ստեղծվում է ճարտարապետական մի յուրահատուկ անսամբլ, որի առջև տարածվելու են սառնորակ աղբյուրներից ներհոսող շուրջ 800 հեկտար մակերեսով նորաստեղծ լճի ջրերը, իսկ հեռվում շողշողալու են վեհանիստ Արագածի հավերժ ձյունով պատած գագաթները։ Ճարտարապետական նոր անսամբլը միահյուսվելով շրջապատի լեռնային բնության բազմերանգ բնապատկերներին, կդառնա հայկական բնաշխարհի առինքնող ամենահիասքանչ վայրերից մեկը։

Արդեն տեղափոխված և նոր տեղում վերաշարված է գյուղամիջի փոքրիկ մատուռը (աշխղեկ, ճարտարապետ Վ. Խաչատրյան)։ 1967-ի մարտից սկսվել են մյուս հուշարձանների տեղափոխման ու նոր վայրում վերակառուցելու աշխատանքները։

Մատուռը, որին տեղացիները «Թուխ մանուկ» են անվանում, հատակագծի պարզ հորինվածքով, համաչափություններով, ճարտարապետական ձևերով ու մանրամասների մշակման բնույթով (պայտաձև աբսիդ, պայտաձև թաղակիր կամար, մոդուլյոններով զարդարված քիվ, կղմինդրյա ծածկ, հնագույն ոճի խոյակներ, խարիսխներ և այլն) հարում է Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի պաշտամունքի երկայնակսն տիպի առավել վաղ շրջանի կառուցվածքներին և անկասկած հանդիսանում է IV դարի առաջին տասնամյակների գործ։

Իր ընդհանուր մտահղացմամբ, վաղ միջնադարի հայկական ճարտարապետության մի եզակի օրինակ է գերեզմանատան մատուռի ու նրան կից երկհարկանի դամբարանի ընդհանուր կառույցը։ Հատակագծում այն իրենից ներկայացնում է 9,37×9,39 մմ չափի հավասարակողմ ուղղանկյունի, որի հյուսիսային կողմում զետեղված է մատուռը, իսկ հարավային մասում՝ երկհարկանի դամբարանը ու նրա շարունակության վրա ստեղծած նախասրահը։ Նախասրահը հատակագծում կրկնելով ամբողջ կոմպլեքսի հատակագծային հորինվածքի նույն հավասարակողմ ուղղանկյան ձևը, ինչպես մատուռի, այնպես էլ դամբարանի իր արտաքին պատերի շարունակությունը կազմող համապատասխան ճակատների նկատմամբ ունի «ոսկյա հատման» հարաբերություն։

Հարուստ ինտերիեր է ունեցել մատուռը, որի առանձին մանրամասների մշակման ոճը (ականտի տերևներով և հավասարաթև խաչերով զարդաքանդակված խոյակներ, հորիզոնական մշակում ունեցող խարիսխներ և այլն) լինելով հար և նման Հայաստանի քրիստոնեական պաշտամունքի անդրանիկ կառուցվածքներ՝ Քասաղի և Տեկորի տաճարներին V դարում ավելացված նույնանման մանրամասներին, հանդիսանում է այդ հավելումների ժամանակաշրջանի արգասիք։

---

3 Մինչև տեղափոխումը հուշարձանները չափագրվել են, ուսումնասիրվել և շրջապատը պեղվել։ «Թուխ մանուկ»-ի շրջապատը պեղվել է հնագիտության և ազգագրության ինստիտուտի, իսկ Պողոս-Պետրոսի և ս. Վարդանի ներսը և շրջապատը Պետշինի և արվեստի ինստիտուտի միջոցներով՝ արվեստի ինստիտուտի կողմից։ Աշխատանքներին տարբեր ժամանակ մասնակցել են՝ Ս. Մարևոսյանը, Վ. Խաչատրյանը, Ա. Քալանթարյանը, Հ. Գասպարյանը, Ս. Նարիմանյանը, Ա. Ենգոյանը և տողերիս գրողը։

Նկ. 2. Թուխ Մանուկի տեսքը հարավից։

Նկ. 3. Ս. Վարդան մատուռի և նրան։ կից դամբարանի ավերակները։

Միանավ կառուցվածքը կրում է ս. Վարդան անունը, որը կառուցվել է 451-ին Ավարայրի ճակատամարտում զոհված հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի հիշատակին, իսկ նրան կից դամբարանում ամենայն հավանականությամբ թաղվել՝ Վարդան Մամիկոնյանի հետ նույն ճակատամարտում զոհված, Վարդան Մամիկոնյանի զինակից Տաճատ Գնթունին։

Նշանակում է V դարի արվեստին բնորոշ ճարտարապետական այդ ձևերն ու մանրամասները (խարիսխ, խոյակ, քիվ և այլն) Հայաստանում գոյություն են ունեցել առնվազն V դարի առաջին կեսից։

Տեղափոխվող հուշարձանների մեջ, գիտական իր բացառիկ նշանակությամբ առանձնահատուկ տեղ է գրավում ս. Պողոս-Պետրոս կոչվող տաճարը։

Չնայած նրա սկզբնական կառուցվածքը ենթարկվել է մի շարք վերանորոգությունների ու վերափոխությունների, այնուհանդերձ պեղումների նյութերը և ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում վերարտադրել նրա նախնական տեսքը և պարզել հիմնական վերափոխությունների պատկերը։

Հատակագիծը 9,06×14,83 մ չափի մի ուղղանկյուն դահլիճ է, որի հյուսիսային ու հարավային պատերից դուրս ելնող զույգ մասսիվ որմնամույթերի վրա խարսխված է եղել երբեմնի գմբեթի ծավալը։

Տաճարի պատերի արտաքին հարթությունների վրա սկզբնական կառուցվածքից քիչ բան է մնացել։ Այդ իսկ պատճառով, տաճարի նախնական հորինվածքի ու նրա հիմնական վերափոխությունների պատկերը վերարտադրելու տեսակետից, մեծ հետաքրքրություն է ներկայացնում շենքի ներքին կառուցվածքը։

Այսպես. 1. Աբսիդի խորշի ներքևի մասը՝ հիմքից մինչև այժմյան բեմի հատակից վեր գտնվող երկու շարքերը ներառյալ, ունի քրիստոնեական վաղ շրջանի կառուցվածքներին բնորոշ խիստ շեշտված պայտաձև տեսք, իսկ նրանից վեր, փոխվում է աբսիդի խորշի թե՛ շարվածքի ձևը՝ և թե՛ կորության պայտաձևության աստիճանը։ Ակնհայտ է, որ աբսիդի խորշի վերին մասը այժմյան լուսամուտի և գմբեթարթի (կոնխայի) շարվածքով մեկտեղ հետագա հավելվածք է[4]։

2. Գմբեթակիր որմնամույթերի միջև ընկած հյուսիսային և հարավային պատերին կից, տաճարի այժմյան սալահատակի տակ, պեղումների ընթացքում բացվեցին աղոթասրահի սկզբնական կառուցվածքի որմնամույթերի մեկական խարիսխները, որոնք ունեն Տեկորի և Քասաղի տաճարների համանման մանրամասներին բնորոշ տեսք։

Ինքնին հասկանալի է, որ աղոթասրահի հյուսիսային և հարավային պատերին զուգահեռ՝ գմբեթակիր մեկ որմնամույթից մինչև գմբեթակիր մյուս որմնամույթը նետվող թաղերի տակ ինչ-որ այլ որմնամույթի կառուցումը կոնստրուկտիվ տեսակետից միանգամայն ավելորդ է, անիմաստ։

Պարզ է, որ հնագույն որմնամույթերը կառուցված են եղել ավելի վաղ, քան գմբեթակիր որմնամույթերը. հետևապես, հնագույն որմնամույթերի

---

4 Աբսիդի արևելյան ճակատի լուսամուտի վերևում եղած արձանագրության համաձայն, այդ հավելումը տեղի է ունեցել 1886-ին, իսկ աղոթասրահի վերջին վերանորոգումը, ինչպես նշված են հարավային մուտքի պարակալի քարի և փայտյա սյուների վրա՝ կատարվել է 1888-ին։



Նկ. 4. Ս. Վարդան մատուռի և նրան կից դամբարանի հատակագիծը։



Նկ. 5. Ս. Վարդան մատուռի խոյակներից.

նկատմամբ, դմբեթակիր որմնամույթերը հանդիսանում են հետագա հավելվածքներ։

3. Աբսիդին կից հարավային որմնամույթի և աղոթասրահի հարավ-արևելյան անկյան պատերի միացման հանգույցում պահպանվել է շենքի այժմյան մուտքերի կառուցվածքի ձևից խիստ տարբերվող, աղոթասրահի սկզբնական մուտքերից մեկը։

Նկ. 6. Ս. Վարդան մատուռին կից դամբարան ներսից։

Մուտքի ճակատաքարի մի մասը և սրբատաշ քարերով երիզված բացվածքի կեսը գտնվում են որմնամույթի շարվածքի հետևում, իսկ բացվածքի մյուս կեսը լցված էր առանց շաղախի ճեղքված քարերի կտորներով և առջևը փակված ուշ շրջանի որմնաշարքերով։

Ընդորում, որմնամույթի հիմքերն իրենց շարվածքով ու քարերի մշակումով տարբերվելով աղոթասրահի հիմքերից և վերջինների նկատմամբ սկսվելով ավելի վերևից, առանց շինարարական կապի հպվում են աղոթասրահի պատի և հիմքերի շարվածքին։

Ակնհայտ է, որ աբսիդին կից հարավային որմնամույթը՝ մինչև նրա կառուցումը գոյություն ունեցած այդ մուտքի, հետևապես և այդ մուտքի հետ օրգանապես միասնություն կազմող աղոթասրահի ամբողջ պատի նկատմամբ հանդիսանում է հետագա հավելվածք։

---

3 Աղոթասրահի դրսի կողմից մուտքը չի երևում, տաճարի 1886—1888 թթ. վերանորոգումների ժամանակ, այն ամբողջապես առնվել է հարավային ճակատի երեսապատման նոր քարերի տակ։

Հնագույն մեկական մուտքերի մնացորդներ բացվեցին նաև աղոթասրահի հարավային և արևմտյան պատերի արտաքին ճակատներին կից. ուր՝ այժմյան հարավային մուտքի բացվածքից մի փոքր դեպի արևմուտք և այժմյան արևմտյան մուտքի բացվածքից մի փոքր դեպի հարավ եռաստիճան զետնախարիսխների վերևի երկու աստիճանները մուտքերի լայնություններին համապատասխան ամբողջությամբ կտրված՝ հանված են եղել։

4. Արսիդին կից հյուսիսային որմնամույթի, ինչպես և աղոթասրահի արևմտյան պատին կից որմնամույթերի բոլոր շարքերը առանց կառուցողական «բևէ կապի ուղղակի հպված են աղոթասրահի համապատասխան պատերի մակերեսներին։

Նշանակում է աղոթասրահի արևելյան և արևմտյան պատերին կից բոլոր որմնամույթերը նույնպես աղոթասրահի կառուցվածքի նկատմամբ հանդիսանում են հետագա հավելվածքներ։

5. Թե արսիդին և աղոթասրահի արևմտյան պատերին հետագայում կրցված որմնամույթերը և թե զմրեթակիր որմնամույթերը ունեն վարպետների միանման նշաններ և քրիստոնեական վաղ շրջանի կառուցողական արվեստին բնորոշ կանոնավոր որմնաշարքեր, ուր քարերը սրբատաշ են և անկյունները 45 աստիճանի տակ կտրված՝ ֆասկաներ հանված։

Կասկածից վեր է, որ ինչպես զմրեթակիր որմնամույթերը, այնպես էլ նրանցից սկզբնավորվող թաղակիր կամարների մյուս կրունկների համար հիմք հանդիսացող արսիդի և աղոթասրահի արևմտյան պատերին կից որմնամույթերը ստեղծվել են միաժամանակ[6]։

Հետևապես, ինչպես զմրեթակիր, այնպես էլ աղոթասրահի արևելյան և արևմտյան պատերին կից որմնամույթերը աղոթասրահի սկզբնական կառուցվածքի նկատմամբ հանդիսանում են հետագա հավելվածքներ։

Դժվար չէ տեսնել, որ առանց հետագա հավելված այդ որմնամույթերի, աղոթասրահը դադարում է զմրեթակիր կառույց լինելուց և շնորհիվ ներսի խիստ շեշտված պայտաձև արսիդի, աղոթասրահի ուղղանկյուն, պարզ տեսքի և մանրամասների մշակման բնույթի, դառնում է քրիստոնեական վաղ շրջանի ուղղանկյուն երկայնական տաճարների տիպի կառուցվածք։

Հայտնի է, որ մեր հուշարձանների ամենից շուտ քայքայվող ու հաճախակի վերանորոգվող մասը շենքի հարավային ճակատն է։ Այդպես է եղել նաև Զովունիում, որի հարավային պատը մինչև տաճարի զմրեթավորումը ինչ-որ վերակառուցման (կամ վերանորոգման) ժամանակ 38 սանտիմետրով ետ է քաշվել դեպի դահլիճ։ Եթե այդ 38 սանտիմետրի չափը ավելացնենք աղոթասրահի լայնության այժմյան 9,06 մետր չափին, ապա աղոթասրահի սկզբնական լայնությունը հավասար կլինի 9,06 + 0,38 = 9,44 մետրի[7]։

---

6 Ընդորում, զմրեթակիր որմնամույթերի և նրանց կից պատերի միայումները շինարարական տեսակետից առանձին տեղերում կազմում են օրգանական միասնություն։ Եվ դա բնական է, կառուցողները եթե թաղակիր կամարների մեկական կրունկների հիմքերը հանդիսացող արևելյան և արևմտյան պատերի որմնամույթերը կարող էին առանց շինարարական կապի ուղղակի հպել մինչև այդ կառուցումները գոյություն ունեցող աղոթասրահի պատերին, ապա նման բան հազիվ թե անեին թմրուկի և զմրեթի անհամեմատ մեծ ծանրություն կրող զմրեթակիր որմնամույթերի կառուցման ժամանակ։ Այդ իսկ պատճառով, ավելի պատասխանատու մասերում հանել են շենքի սկզբնական կառուցվածքի պատի շարվածքի մի քանի քարերը և զմրեթակիր մույթերը հրգանապես կապել պատի միջուկի հետ. իսկ նվազ ծանրություն կրող որմնամույթերը ուղղակի կպցրել մինչև այդ կցումները գոյություն ունեցող կառուցվածքի հարթ պատերին։

7 Թ. Թորամանյան, Նյութեր..., հատոր II, էջ 132—133։

Քրիստոնեական վաղ շրջանի պաշտամունքի հայկական երկայնական տիպի կառուցվածքների աղոթասրահների լայնությունների համեմատական հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, որ Զովունիի աղոթասրահի լայնությունը գրեթե մեկ և կես անգամ լինելով ավելին, քան միանավ ամենախոշոր կառուցվածքների աղոթասրահների լայնությունները, ունի (չնչին տարբերությամբ) այն չափը, որպիսին ունեն նույն ժամանակաշրջանի եռանավ ամենահնագույն կառույցները։

	Շենքերի կառուցման վայրը	Աղոթասրահների լայնությունները
Միանավեր	Օձուն, Փարպիի Միրանավոր, Էջմիածնի միանավ, Ադարակ (Աշտարակի շրջան), Փարպիի ս. Գրիգոր	3,48--4,85
	Շիրվանջուղ, Հորարցի, Ադարակ (Տեկորի մոտ), Բյուլգարակ, Հայդարբեկ (այժմյան Ավերդլով)	5,40--5,94
	Դաստի, Ավան (Աշտարակի շրջան), Աբորի, Գիրաբլար, Ջառջառիս, Ողվարդ, Խանահաս	6,00--6,70
Եռանավեր	Զովունի	9,44
	Աշտարակի Միրանավոր	9,4[illegible]
	Քասաղ	9,971
	Միծեռնավանք	9,998

Ինչպես տեսնում ենք Զովունիի սկզբնական կառուցվածքը իր լայնական չափով անառարկելիորեն մտնում է Աշտարակի, Քասաղի, Միծեռնավանքի եռանավ տաճարների շարքը։

Հայ պատմական ճարտարապետության մեծ գիտակ Թորոս Թորամանյանը Զովունիի աբսիդի արտաքին ուղղանկյունի ձևը համարելով քրիստոնեական տաճարաշինության մեջ հանդես եկած աբսիդների անդրանիկ օրինակներից, կասկածում է միայն, որ Զովունիի աբսիդի ներսի պայտաձև խորշը կարող է ժամանակակից չլինել տաճարի նախնական կառուցվածքին[8]։

Պեղումների նյութերը ցույց են տալիս, որ աբսիդի թե՛ արտաքին ուղանկյունի այդ հնագույն կառուցվածքը և թե՛ նրա ներսի պայտաձև հորինվածքը տաճարի աղոթասրահի նկատմամբ հանդիսանում են հետագա հավելվածներ։

Աբսիդից 1,78 մետր դեպի հյուսիս, աբսիդի բազմաստիճան որմնախարիսխներից անկախ, գոյություն ունեն երկաստիճան առավել հնագույն որմնախարիսխներ, որոնք կազմում են տաճարի աղոթասրահի հյուսիսային պատի որմնախարիսխների շարունակությունը։ Պարզ երևում է, որ այդ որմնախարիսխները պատկանում են տաճարի հյուսիսային պատին, որի արևելյան շարունակությունը քանդվել է, պատը դեպի հարավ 90 աստիճանով շրջվել և միացվել է աղոթասրահի արևելյան մասում ավելացվող աբսիդի ծավալին։ Հետևապես, աղոթասրահի հյուսիսային պատի այդ շարունակությունը ժամանակակից չէ աբսիդին և աղոթասրահն իր կառուցման սկզբնական շրջանում ունեցել է ավելի մեծ երկարություն, որը հետագայում՝ աբսիդի ավելացման պատճառով կրճատվել է։

8 Թ. Թորամանյան, Նյութեր..., Երևան, 1942, հ.ատոր II, էջ 131։



Նկ. 7. Պողոս-Պետրոս տաճարի հատակագիծը։



Նկ. 8. Պողոս-Պետրոս տաճարի սերսը հյուսիսից։

Ակնհայտ է, որ առանց աբսիդի, աղոթասրահի այդ առավել հնագույն հորինվածքը կստանա ներքին ավելի մեծ տարածություն և կընդունի արևմուտքից-արևելք ուղղված մի պարզ երկայնական դահլիճի տեսք։

Հայտնի է, որ հայկական հեթանոսական տաճարների մի մասը նույնպես ունեցել է առանց արևելյան հատվածում որևէ օժանդակ կառույցի արևմուտքից-արևելք ուղղված ուղղանկյուն-երկայնական պարզ հորինվածք[9]։

Նկ. 9. Պողոս-Պետրոս տաճարի գմբեթակիր հյուսիս-արևելյան մույթը թաղի մնացորդով։

Նկ. 10. Պողոս-Պետրոս տաճարին հետագայում կցված մույթը և նրա տակին պահպանված հնագույն դուռը։

Քրիստոնեական կրոնի տարածման ժամանակ, այդ տաճարները կամ ամբողջապես ավերվել են և նրանց տեղում ստեղծվել նոր պաշտամունքի անդրանիկ կառուցվածքներ[10], կամ պահպանվել են միայն նրանց հիմքերը և այդ հիմքերի վրա բարձրացվել նոր պաշտամունքի շենքը[11] կամ ուղղակի «սրբագործվել են» և օգտագործվել իբրև քրիստոնեական առաջին տաճարներ[12]։

---

[9] Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889, էջ 32—35։ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 209 և այլն։ Ալ. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 230—232։ Հիմնականում նման կողմնորոշում և ուղղանկյուն երկայնական կառուցվածք են ունեցել նաև հունական մեհյանները („Всеобщая история архитектуры", Москва, 1949, т. II, кн. I, стр. 16)։ Գառնիի հեթանոսական տաճարը ունի հյուսիս-հարավ կողմնորոշում։

10 Ագաթանգեղեայ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 395—410։

11 Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, էջ 35։

12 Փավստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, երրորդ դպրութիւն, գլ. Գ, էջ 12։

Անտարակույս, վերջին երևույթը տեղի է ունեցել նաև Զովունիում և Պողոս-Պետրոս տաճարի սկզբնական կառուցվածքը իրենից ներկայացնում է քրիստոնեական պաշտամունքի տաճարի փոխակերպված նախկին մեհյան:

Նշանակում է Զովունիում բացահայտվում է հայկական մեհյանի (կամ նրա տիպերից մեկի), ինչպես հատակագծային, այնպես էլ տարածական-ծավալային հորինվածքի ամբողջական կերպարը:

Նկ. 11. Պողոս-Պետրոս տաճարի արսիդին հետագայում կցված հյուսիսային որմնամույթը։

Ուրեմն, հեթանոսական տաճարը III դարի վերջերին կամ IV դարի սկզբներին «սրբագործվել է» ու դարձել քրիստոնեական պաշտամունքի աղոթատեղ, իսկ վերջինս հետագայում նորից վերակառուցվելով՝ ստացել է գմբեթակիր հորինվածք։

Գմբեթի կառուցման ժամանակի պարզաբանման հարցին որոշակիորեն նպաստում է տաճարի գմբեթակիր հյուսիս-արևելյան որմնամույթի հարավային ճակատի վրա փորագրված շինարարական արձանագրությունը, ուր գրված է.

(«Քրիստոս Աստուած յիշեա զԴրիդոր Գնթունեաց տէր...»)։ Հայ





Նկ. 12. Պողոս-Պետրոս տաճարի հյուսիս-արևելյան հանգույցում պահպանված հնագույն որմնախարիսխների մնացորդները։

Նկ. 13. Պողոս-Պետրոս տաճարի գմբեթակիր որմնամույթի վրա փորագրված Դնիլունիների արձանագրությունը։

վիմագրության ճանաչված մասնագետ Սեդրակ Բարխուդարյանը մեր խնդրանքով ուսումնասիրելով արձանագրությունը, այն կարծիքն է հայտնում, որ արձանագրությունը հանդիսանում է V—VII դարերի միջև ընկած ժամանակահատվածի գործ։ Հետևապես, տաճարի գմբեթավորման ամենաուշ սահմանը VII դարն է։

Գմբեթավորումից հետո տաճարն ստացել է այսպես կոչվող «գմբեթավոր սրահի» հորինվածք, սակայն այն որոշակիորեն տարբերվում է Հայաստանի VI—VII դարերի և ավելի ուշ շրջանում ստեղծված նույնատիպ հուշարձաններից (Պտղնի՝ VI դարի երկրորդ քառորդ, Արուճ՝ VII դար, Շիրակավան՝ IX դարի վերջ և այլն)։

Այսպես.

1. Եթե VI—VII դարի և ավելի ուշ շրջանի շենքերում գմբեթի ծավալը կառուցված է՝ ամբողջ շենքի (աղոթասրահը և աբսիդը միասին վերցրած) կենտրոնում, որի հետևանքով գմբեթը, կազմելով ողջ կառույցի հետ օրգանական ամբողջություն, դարձել է ամբողջ շենքի տարածական ծավալային հորինվածքը գլխավոր, ուղղաձիգ առանցքը, ապա Զովունիում այն բարձրացել է աղոթասրահի կենտրոնից, իսկ գմբեթի ծավալը շենքի ընդհանուր հորինվածքի նկատմամբ ստացել է ասիմետրիկ դիրք։

2. Եթե VI—VII դարերի և ավելի ուշ շրջանի համանման շենքերում գմբեթատակ տարածությունը իբրև կանոն գտնվում է աղոթասրահի արևմտյան պատից հեռու, իսկ արևելյան պատին՝ այսինքն աբսիդի բացվածքին ավելի մոտ, ապա Զովունիում գմբեթատակ տարածությունից դեպի աղոթասրահի արևելյան և արևմտյան պատերը եղած հեռավորությունները գրեթե միմյանց հավասար են, որի հետևանքով Զովունիի գմբեթատակ տարածությունից դեպի աբսիդը եղած հեռավորությունը ստացվել է համեմատաբար մեծ, իսկ դեպի արևմուտք ընկած տարածությունը՝ համանման տաճարների նույն հատվածի համեմատությամբ՝ նեղվածք։

3. Եթե VI—VII դարերի և ավելի ուշ շրջանի համանման տաճարների աբսիդների երկու կողմերում գոյություն ունեն նրանց ընդհանուր կառուցվածքների հետ օրգանական միասնություն կազմող օժանդակ սենյակներ և այդ սենյակների ու աբսիդների միացման հանգույցներում առաջացած պատերի մեծ զանգվածները թեթևացնելու նպատակով ստեղծվել են արտաքին խորշեր, ապա Զովունիի տաճարը քրիստոնեական ավելի վաղ շրջանի պաշտամունքի կառուցվածքների նման՝ օժանդակ սենյակ, հետևապես և արտաքին խորշեր չունի։

Ակնհայտ է, որ Հայաստանի VI—VII դարերի և ավելի ուշ հանդես եկած նույնատիպ տաճարների համեմատությամբ, Զովունիում թե՛ հատակագծային և թե՛ տարածական ծավալային կոմպոզիցիայի հանգուցային առանձին հարցեր դեռես գտնվել են իրենց մշակման առավել հնագույն, նախնական փուլում։

Քրիստոնեական առավել վաղ շրջանի արվեստի հետ որոշակիորեն առընչվում է նաև Զովունիի մանրամասների մշակման ոճը։

Պեղումների ժամանակ բացվեցին՝ գմբեթի փոքր տրոմպներից մեկը ամբողջական վիճակում, մեծ տրոմպի մի քանի քարերը, թմբուկի բազմանիստ կողերի պատերի, նրանց քիվերի ու լուսամուտների պսակների զարդաքանդակված բազմաթիվ բեկորներ և կղմինդրի մեծ քանակությամբ մնացորդներ։

Ճարտարապետական մանրամասների զարդաքանդակները իրենց ոճով մեծ



Նկ. 14. Պողոս-Պետրոս տաճարի գմբեթի փոքր տրոմպներից։

Նկ. 15. Պողոս-Պետրոս տաճարի թմբուկի քիվի բեկորներից։

ընդհանրություն ունեն IV—V դարերի հուշարձաններ՝ Տեկորի, Քասաղի, Երերուքի եռանավ բազիլիկաների, Ռյուլագարակի երեք կողմից սյունասրահներով շրջապատված միանավ կառուցվածքի համանման ղարդաքանդակների հետ։

Միայն Տեկորի գմբեթի[13] արխայիկ ձևի համեմատությամբ Զովունիի գմբեթի ավելի կատարելագործված հորինվածքը (տրոմպային փոխանցում և այլն) ցույց է տալիս, որ Զովունիի գմբեթը Տեկորի գմբեթի զարգացման հաջորդ շրջանի արգասիք է։

Նկ. 16. Պողոս-Պետրոս տաճարից՝ քանդակազարդ բեկոր։

Ճարտարապետական որևէ ձևի կատարելագործման բուռն շինարարության պայմաններում, համեմատաբար կարճ ժամանակահատվածում անգամ, միանգամայն հնարավոր է, այդ ձևի հնագույն ինչ-որ մտահղացումից հասնել նրա առավել կատարյալ աստիճանին։

Այդ երևույթը ակնհայտորեն տեղի է ունեցել նաև Հայաստանի գմբեթաշինության մեջ, որի ցայտուն օրինակը (կամ ավելի ճիշտ օրինակներից մեկը) Տեկորի գմբեթից հետո ստեղծված Զովունիի գմբեթն է։

Հետևապես, վերը հիշատակված «գմբեթավոր սրահ»-ների ավարտուն կերպարի համեմատությամբ Զովունիի տաճարի ինչպես հատակագծային ու տարածական ծավալային հորինվածքի հնագույն բնույթը, այնպես էլ քրիստոնեական ավելի վաղ շրջանին (IV—V դդ.) բնորոշ մանրամասների առկայու-

---

13 Նույն ժամանակաշրջանի հանդուցային հուշարձաններից է Ողջաբերդում Ն. Տոկարսկու բացահայտած փոքրիկ կառուցվածքը։ Տոկարսկին այն համարելով V դարի գործ, նրա ծածկի ձևի իր կազմած վերակազմության նախագծի բացատրության մեջ գրում է «Это был полуциркульный сомкнутый свод со срезанными над тромпами ребрами» (Տե՛ս Н. М. Токарский, Джрвеж и Вохджаберд, Ереван, 1964, стр. 64).

թյունը ցույց են տալիս, որ Զովունիի գմբեթավորումը պետք է տեղի ունեցած լինի ամենաշուտը V դարի վերջերին (Տեկորի տաճարի գմբեթավորումից հետո) և ամենաուշը՝ ավելի վաղ, քան VI դարի երկրորդ քառորդում ստեղծված Պտղնիի տաճարի կառուցումը, այսինքն V դարի վերջերից մինչև VI դարի առաջին տասնամյակները ընկած ժամանակաշրջանում[14]:

Այսպիսով, պարզվում է, որ Բրիստոնեական վաղ շրջանի երկայնական տիպի կառուցվածքի գմբեթավորման ճանապարհով, Հայաստանում դեռևս V դարի վերջերից մինչև VI դարի առաջին տասնամյակները ընկած ժամանակամիջոցում ստեղծվում է միջնադարի ճարտարապետական ընդհանուր արվեստի ամենատարածված ու ամենաճշանավոր տիպերից մեկի՝ «գմբեթավոր սրահի» կերպարը:

Այս փաստը մի կողմից, մեկ անգամ ևս ժխտում է պրոֆ. Գ. Զուբինաշվիլու անհամոզիչ այն տեսակետը, երբ այսպես կոչված «ոճական վերլուծությունների» ճանապարհով փորձում է Հայաստանի նույնատիպ կառուցվածքների հանդես գալու ժամանակը շուրջ երեք դար ետ քաշելով տեղափոխել է IX դարի վերջ[15]. *մյուս կողմից, լիովին հաստատում, խոշորագույն արևելագետ պրոֆ. Հ. Ստրժիգովսկու տեսակետը, երբ նա Արուճի «գմբեթավոր սրահի» ավարտուն կերպարը ընդունելով VII դարի գործ և հիշատակելով ճարտարապետական ընդհանուր արվեստում եղած այն հնարավոր նախադրյալները (Իրանի հնագույն հուշարձաններից՝ Տակ-էյիվան, Կոստանդնուպոլսի ս. Իրինայի տաճարը (532 թ.) և այլն), որոնք կարող էին նշանակություն ունենալ նույնատիպ կառույցների կազմավորման համար, եզրակացնում է, թե Հայաստանում «...ճարտարապետական ձևը ինքը չէ, որ կարող էր առաջանալ արդեն* VI դարում»[16] *(ընդգծումն իմն է — Ա. Ս.)։*

Անտարակույս, Զովունիի Պողոս-Պետրոս տաճարի գիտական նշանակությունը դուրս է գալիս ճարտարապետական ազգային արվեստի շրջանակներից։ Այն՝ էջմիածնի, Տեկորի, Ռվինի տիպի հանգուցային հուշարձանների նման վերարտադրելով հայ դասական ճարտարապետության կազմավորման ամենաէական մի քանի փուլերը, որոշակի նշանակություն ունի ճարտարապետական-կառուցողական ընդհանուր արվեստի վաղ միջնադարի նույնատիպ կառուցվածքների ծագման ու կազմավորման ընթացքի ճշմարտացի վերարտադրման համար։

---

[14] *Թ. Թորամանյանը Պողոս-Պետրոսի աղոթասրահը իր որմնամույթերով դիտելով շինարարական մեկ շրջանի արգասիք, այն համարում է V դարի գործ (Նյութեր.... հատ. Ա, էջ 132—133, հատ. Բ, էջ 128, 199 և այլն)։ Այն կառուցողական մեկ շրջանի գործ է համարում նաև Գ. Հովսեփյանը. նա գրում է. «եկեղեցին հիսսայիին պատի արտաքին որմայեցների պահպանությամբ, նման Երերույքի եւ Գառնիի հիսսային պատերի որմայեցներին, ապացոյցն է տալիս, որ նա Զ—Ե դարի գործ էր» («Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակույթի պատմութեանց», Նիւ-Յորք, 1944, էջ 30)։*

[15] Г. Н. Чубинашвили, Архитектура Кахетии, Тбилиси, 1959, стр. 318, *նույն տեսակետը տեղ է գտել նրա նաև մինչ այդ հրատարակած այլ աշխատություններում և քննադատվել (Տե՛ս* В. М. Арутюнян, По поводу датировки храма в Аруче, „Сборник трудов" Ереванского политехнического института, № 2, 1946).

[16] J. Strzygowski. Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, B. II. s. 588.

А. А. САИНЯН

АРХИТЕКТУРНЫЙ КОМПЛЕКС ЗОВУНИ

В Апаранском районе создается крупное искусственное озеро, и местность, на которой находятся архитектурные сооружения села Зовуни, остается под водой[1].

Строительная жизнь в Зовуни началась в далеком прошлом. В раннем средневековье здесь уже существовала большая группа архитектурных построек, являющихся результатом высокоразвитого архитектурного искусства. От них сохранились остатки созданной в первые десятилетия четвертого века изящной культовой постройки, часовня, возведенная в память павшего в 451-м году в Аварайрском сражении армянского спарапета (главнокомандующего) Вардана Мамиконяна и двухэтажная гробница при ней, а также купольный храм, имеющий исключительное научное значение.

План храма представляет собою продольный зал размером 9,06×14,83 м, на двух массивных пилонах которого, выступающих из северной и южной стен, покоился когда-то купол. Подковообразная изнутри и прямоугольная снаружи апсида справедливо считается произведением, созданным в начальный период принятия в Армении христианской религии.

Строительный анализ показывает, что как апсида, так и подкупольные и все остальные пилоны являются в отношении молитвенного зала храма последующими добавлениями. Без этих добавлений первоначальная структура храма представляется простым продольным залом, вытянутым с запада на восток, и определенно получает композицию одной части языческих храмов Армении.

Известно, что во время принятия христианской религии отдельные капища были «освящены» и превращены в молельни новой религии. Такое явление имело место, несомненно, и в Зовуни. Следовательно, языческий храм в Зовуни вначале стал первичной молельней христианского культа, а впоследствии, будучи перестроен, получил композицию купольного зала.

Как показывает надпись, начертанная на одном из подкупольных пилонов и сравнительный анализ храмов такого же типа, *создание купольного зала в Зовуни имело место в период между концом пятого и первыми десятилетиями шестого века.*

Этот факт, с одной стороны, еще раз отвергает неубедительную точку зрения проф. Г. Чубинашвили, который, при помощи одних лишь «стилистических анализов», пытается перенести появление в Армении такого типа строений на целых триста лет назад, к концу девятого века, а с другой стороны, полностью подтверждает мнение крупнейшего востоковеда И. Стржиговского. Проф. И. Стржиговский, признавая законченн-

[1] Госстрой Армении переносит все эти сооружения в точно таком же виде в другое место.

ный облик «купольного зала» в Аруче произведением 7 века и упоминая в общем архитектурном искусстве те возможные предпосылки, которые могли бы иметь значение для формирования однородных сооружений, приходит к заключению, что в Армении. «...сама архитектурная форма ведь могла возникнуть уже в VI веке».

Научное значение купольного храма Зовуни выходит из рамок национального архитектурного искусства. Воспроизводя подобно узловым памятникам типа Эчмиадзина, Текора, Двина некоторые наиважнейшие этапы формирования армянской классической архитектуры, он имеет определенное значение для правильного воспроизведения хода зарождения и формирования тождественных сооружений общего архитектурного искусства раннего средневековья.